ՏԻԿԻՆ Մ. ԼԻՍԻՑԵԱՆԻ ՃԱՌԸ

(Արտասանված յօբել. հանդէսին Ներսիսեան դպրոցում)

Ասացուածք կայ, թէ միտքը կեանքի շունչն է, խօսքը՝ մտքի արտայայտութիւնը, իսկ գիրքը՝ մտքի անմահութիւնը։ Եւ եթէ գիրքը մատակարարում է մեզ մտքերի մի ամբողջ ապարանք, հարստացնում է մեր ուղեղը, կոփում կամքը և առաջ մղում առաջադիմութեան ճանապարհով, արդ՝ ինչպէս չը խոնարհել նահապետների, աշխարհի լուսաւորիչների ու մարդկութիւնը առաջ մղողների առաջ։ Վարժուհիների և դաստիարակչուհիների Թիֆլիսի ընկերութիւնը ևս միացնում է իր բերկրանքի ձայնը այսօրվայ հանդիսի ընդհանուր ձայնին։ Թող ուրեմն անմահ լինեն այն մարդկանց անունները, որոնք ստեղծել են անմահ կաղապարը հզօր ստեղծագործող մտքի։